

4.1.2. Մարդասիրական օգնություն

Ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, 2000թ. հունվար-նոյեմբերին մարդասիրական օգնության կարգով, Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել 50634.4 տոննա ապրանքներ, որոնց արժեքը կազմել է 31634.4 մլն. դրամ կամ 59.2 մլն. ԱՄՆ դոլար: Ստացված օգնության 40.3%-ը կազմել են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը (1999թ. հունվար-նոյեմբերին այն կազմել է 40.2%), 13.7%-ը՝ բուսական ծազման արտադրանքը (1999թ.՝ 7.6%), 9.8%-ը՝ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմները (1999թ.՝ 10.9%), 8.2%-ը՝ սարքերը և ապարատները (1999թ.՝ 10.2%), 79.0%-ը մանածագործական իրերը (1999թ.՝ 10.9%), և այլ բեռներ:

Մարդասիրական օգնության ծավալը 1999-2000թթ. հունվար-նոյեմբերին, ըստ ապրանքային խմբերի

	1999 թ. հունվար -նոյեմբեր			2000 թ. հունվար-նոյեմբեր			Աճի տեմպը %-ով
	Քանակը, տոննա	Արժեքը		Քանակը, տոննա	Արժեքը		
		մլն. դրամ	հազ. ԱՄՆ\$		մլն. դրամ	հազ. ԱՄՆ \$	
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	21975.8	31370.1	58408.9	50634.4	31826.0	59207.3	101.4
այդ թվում՝							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծազման արտադրանք	410.6	752.4	1428.4	836.6	1535.8	2906.8	203.5
Բուսական ծազման արտադրանք	11834.9	2356.5	4412.5	34514.7	4426.4	8096.4	183.5
Կենդանական և բուսական ծազման յուղեր և ճարպեր	3625.9	2039.4	3821.2	1504.8	696.3	1318.4	34.5
Պատրաստի սննդի արտադրանք	290.5	217.6	406.9	1370.9	654.7	1220.4	299.9
Հանքահումքային արտադրանք	1944.8	142.1	263.5	78.5	8.6	15.9	6.0
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1416.6	12661.2	23453.1	10259.6	12819.8	23835.7	101.6
Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր	83.9	319.8	601.3	48.8	88.7	165.3	27.5
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	3.7	28.6	53.1	0.7	3.6	6.7	12.5
Փայտ և փայտյա իրեր	3.0	14.0	25.9	20.6	48.2	88.1	340.8
Թուղթ և թղթից իրեր	185.4	479.1	896.0	81.8	1049.7	1919.3	214.2
Մանածագործական իրեր	753.2	3438.4	6361.3	536.2	2877.0	5306.5	83.4
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	16.0	90.5	167.2	11.5	70.0	131.5	78.6
Իրեր քարից, գիպսից,ցեմենտից	218.7	148.6	278.3	262.1	75.2	138.5	49.8
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	122.7	235.0	437.4	57.4	114.5	210.6	48.2
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	379.9	3425.9	6388.5	419.0	3069.4	5786.3	90.6
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	211.0	837.2	1561.5	325.3	703.8	1325.0	84.9
Սարքեր և ապարատներ	121.9	3164.3	5948.3	113.4	2566.0	4827.7	81.2
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	352.7	1009.0	1885.3	192.3	999.7	1873.7	99.4

4.ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

	1999 թ. հունվար -նոյեմբեր			2000 թ. հունվար-նոյեմբեր			Աճի տեմպը %-ով
	Քանակը, տոննա	Արժեքը		Քանակը, տոննա	Արժեքը		
		մլն. դրամ	հազ. ԱՄՆ\$		մլն. դրամ	հազ. ԱՄՆ \$	
Արվեստի ստեղծագործություններ	0.2	10.4	19.2	0.0	18.6	34.7	180.5

Սարդասիրական օգնություն ստացվել է աշխարհի 31 երկրներից, հիմնականում՝ ԱՄՆ-ից (ընդհանուր օգնության 74.9%-ը), Իտալիայից (7.2%-ը), Ճապոնիայից (4.6%-ը), Հունաստանից (2.4%-ը), Ֆրանսիայից (6.1%-ը):